ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 27 դեկտեմբերի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Խաչատրյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Հ. Նազարյանի

Ուսումնասիրելով Վիգեն Գրիգորյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Վիգեն Գրիգորյանը 2016թ. դեկտեմբերի 20-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով.

«Վարչական դատավարության օրենսգրքի 131 հոդվածի 1 մասի դրույթը ճանաչել ՀՀ Սահմանադրության 3 հոդվածի, 61 հոդվածի, 63 հոդվածի 1 մասին հակասող և անվավեր այնքանով, որքանով բացառում է վարչական գործը վերա-

հասցեագրելու վերաբերյալ վարչական դատարանի դատական ակտերի՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա լինելը»:

Դիմողը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասն այնքանով, որքանով բացառում է վարչական գործը վերահասցեագրելու վերաբերյալ վարչական դատարանի դատական ակտերի՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա լինելը, հակասում է ՀՀ Սահմանադրության 3 և 61-րդ հոդվածների, 63-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:

Դիմողը նշում է, որ երկու տարի շարունակ դատարանները քննել են գործը, դրանից հետո վարչական դատարանն ընդամենը մեկ դատական նիստով հանգել է այն եզրակացությանը, որ իր վեճը վերաբերում է ոչ թե հանրային իրավահարաբերություններին, այլ ժառանգական իրավահարաբերություններին և ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին և զրկել է իրեն՝ գործը վերահասցեագրելու վերաբերյալ որոշումը բողոքարկելու հնարավորությունից, որը ոչ այլ ինչ է, քան իր՝ սահմանադրորեն երաշխավորված՝ անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունքի խախտում:

Ըստ դիմողի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում գործը վերահասցեագրելու վերաբերյալ որոշման բողոքարկման իրական հնարավորություն, դատարանի կողմից գործը վերահասցեագրելու մասին որոշման կայացումն ըստ էության եզրափակում է վարչական գործի քննությունը, ավարտում գործի վարույթը՝ առանց բավարարման թողնելով իր ենթադրաբար խախտված իրավունքների խնդրանքով դատարան դիմած անձի պահանջը:

2. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ անհատական դիմումի քննության ընդունումը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

դիմումն ակնհայտ անհիմն է:

Սույն գործի դատավարական նախապատմությունը վկայում է, որ ՀՀ վարչական դատարանը 2016 թվականի ապրիլի 13-ին որոշում է կայացրել գործը վերահասցեագրելու մասին: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 81-րդ հոդվածի

համաձայն՝ վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածը սահմանում է այն միջանկյալ ակտերի շրջանակը, որոնք ենթակա են բողոքարկման: Վերջինս այն իրավական միջոցն է, որը հնարավորություն է տալիս անձին անմիջական կարգով բողոքարկել վարչական դատարանի միջանկյալ դատական ակտերը: Վարչական դատական ակտերի բողոքարկման մյուս հնարավորությունը «հետաձգված բողոքարկումն» է: Դիմողի կողմից վիճարկվող դրույթը նրա նկատմամբ կիրառվել է միջանկյալ դատական ակտով: ՀՀ սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում, մասնավորապես, 2010 թվականի սեպտեմբերի 28-ի ՍԴՈ-918 և 2010 թվականի նոյեմբերի 2-ի ՍԴՈ-922 որոշումներում անդրադարձել է միջանկյալ դատական ակտերի բողոքարկման հնարավորությանը՝ արձանագրելով, որ «... օրենսդիրը տարբերակում է միջանկյալ դատական ակտերի բողոքարկման երկու կարգ, այն է՝ բողոքարկում գործն ըստ էության լուծող դատական ակտերի շրջանակում՝ «հետաձգված բողոքարկում», և անմիջական բողոքարկում: Եթե վարույթի հետագա ընթացքը կասեցնող միջանկյալ դատական ակտի դեմ իրավական պաշտպանության միակ միջոցը դրա անմիջական բողոքարկումն է և ըստ այդմ օրենսդրից պահանջվում է նախատեսել տվյալ ակտի անմիջական բողոքարկման կարգ, ապա չկասեցված և շարունակվող վարույթի ընթացքում ընդունված միջանկյալ դատական ակտի բողոքարկման նշված երկու կարգերի միջև ընտրությունն օրենսդրի հայեցողության շրջանակում է»: Եվ քանի որ սույն գործի շրջանակներում վարչական դատարանի՝ գործը վերահասցեագրելու մասին որոշումը չի կասեցնում գործի հետագա ընթացքը, հետևաբար, միջանկյալ նման ակտերի բողոքարկման կարգի ընտրությունն օրենսդրի հայեցողության շրջանակում է:

Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելիս, ի թիվս ըստ ձևի ներկայացվող պահանջների կատարման, անձը պետք է հստակ պատկերացնի իր նկատմամբ վերջնական դատական ակտով կիրառված օրենքի նորմի բովանդակությունը և փորձի գնահատել ու նախատեսել Սահմանադրական դատա-

բանում իր իրավունքների պաշտպանությանն ուղղված և Սահմանադրությամբ ու օրենքով թույլատրելի հետագա գործողությունները, ինչպես նաև պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ է ակնկալում սահմանադրական դատարանում դիմումի քննության արդյունքում: «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասով ամրագրված՝ վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջն ինքնանպատակ չէ և համաձայն դրա՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հատկանիշով, ինչը նշանակում է, որ դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև, **պահանջ,** ինչը չի բավարարում Սահմանադրական դատարան ներկայացված խնդրո առարկա անհատական դիմումը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Վիգեն Գրիգորյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

27 դեկտեմբերի 2016 թվականի
ՍԴԴԿՈ/2-36